ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԻԿ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.12.2019թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Սեփոյանը, Ս. Մուխսիկարոյանը, Լ.Հովհաննիսյանը և Մ.Անտոնյանը քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ԻԿ-20/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ (ՀՀ, ք. Աբովյան, Խաղաղության 1)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Հ/Հ	Անվանում	Գնման հայտով սահմանած գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
			«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ
1	Ինտերնետային կապի ծառայություն - Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Նաիրյան 189	302000	**251500**

	հասցեում		
2	Ինտերնետային կապի ծառայություն - Տավուշի մարզ, Գ. Գետահովիտ, 1-ին փ. 3-րդ շենք հասցեում	240000	**200000**
3	Ինտերնետային կապի ծառայություն - Լոռու մարզ, ք.Վանաձոր, Զորավար Անդրանիկի 12 հասցեում	302000	**251500**
4	Ինտերնետային կապի ծառայություն - Վայոց ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Թամանցիների 45/1 հասցեում	120000	**100000**
5	Ինտերնետային կապի ծառայություն- Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապարակ 4 հասցեում	216000	**180000**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարել **1-5** չափաբաժինների համար և հաջորդ նիստը հրավիրել **2019թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում բավարար գնահատված կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ.Սեփոյան

_____ Ս. Մուխսիկարոյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան